Արդ՝ ի՞նչ է տեսնում, ի՞նչ է անում պատուիրակութիւնը։

Սանդարում պատուիրակութեան ներկայանում են գիւղերի պատուիրակները, որոնք «միաբերան յայտնեցին, թէ աւելի համբերել այլևս չեն կարող, թէ այն, ինչ որ կատարւում է Բորչալուի գաւառում, այլևս անտանելի է։ Ջարդերը, կողոպուտն ու թալանը, սպանութիւնները, քայքայումը, հրկիզումները տեղական մահմեդական ազգաբնակութեան հասցրել են այնպիսի մի վիճակի, որ նրանք էլ չեն կարող համբերել։ Եւ պահանջեցին Անդրկ. Կոմիսարիատի պատուիրակութիւնից ձեռք առնել ամենախիստ ու շտապ միջոցներ. պահանջում էին հաստատել ժողովրդական ռազմա-յեղափոխական դատարան, որ նա դիմէ կտրուկ միջոցների և նոյնիսկ մահապատժի»։

Ուլուխանլուում պատուիրակութեան առջև պարզւում է այսպիսի պատկեր. «Ուլուխանլուն ներկայացնում է պատերազմական մի բանակ։ Նախ՝ պատուիրակութեան դիմաւորեց այդ կայարանի գինուած պահակախումբը՝ մի քանի հարիւր գինուած գիւղացիներ, մի քանի հարիւր հոգի ձիաւորներ, ամենքը գինուած։ Այս մեծ հանգուցային կայարանը բոլորովին այրուած է, այնպէս որ հեռագրաթելը վերականգնելու նպատակով էջմիածին կայարանից մեզ հետ առած ծառայողներին տեղ չկար տեղաւորելու։ Մենք իմացանք, որ մի քանի օր առաջ այնտեղից հեռացել էին բոլոր ծառայողները, որովհետև կայարանի վրա յարձակւել էին քրդերը, այրել, քար ու քանդ արել ու կողոպտել ամէն ինչ, կրակի մատնել կայարանի բոլոր շէնքերը։ Մահմեդականների ներկայացուցիչները յայտնեցին, որ նրանք թոյլ չեն տայ, որ պատերազմից մնացած պետական ստացուածքը բաժին հասնի բացառապէս հայերին կամ վրացիներին. նրանք պահանջում էին, որ այդ ստացուածքը հաւասարապէս բաժանուի Անդրկովկասի բոլոր ժողովուրդների միջև։ Մասնաւորապէս, պահանջում էին, որ մահմեդականներին տրուի այն քանակութեամբ գէնք, ինչ քանակութիւն որ համապատասխան է իրենց ազգաբնակութեան թիւին։ Յետոյ, մահմեդականները յայտնեցին, որ իրենք թոյլ չեն տայ երկաթուղային հաղորդակցութեան վերականգնումը մինչեւ որ իրենց հիմնական պահանջը չգոհացուի. եթէ հայերը կամենում են խաղաղութեամբ կարգադրել այս բանումը, նրանք պարտաւոր են անյապաղ լուծել իրենց զօրագնդերը և զէնքերը յանձնել Թուրքերին, այլապէս իրենք թոյլ չեն տայ կարգի վերականգնումը...

Պատուիրակութիւնը ընդունում է նաև քրդերի ներկայացուցիչներին։ Նրանք յայտնում են, թէ, ճիշտ է, իրենք թալանում ու քանդում են և կը շարունակեն քանդել ու թոյլ չեն տայ, որ երկաթուղային հաղորդակցութիւնը վերականգնի, որովհետև քիւրդ բնակչութիւնը բոլորովին մատնուած է անուշադրութեան և դատապարտուած է սովի։ Մթերք ու նպաստ ստանում են մահմեդականներն ու հայերը, բայց ոչ քրդերը։ Եւ, հետեւաբար, քանի որ երկաթուղին գոյութիւն ունի միայն մահմեդականների ու հայերի համար, իրենց ուրիշ ոչինչ չի մնում, բացի թալանից և ճանապարհին հանդիպած ամէն բան փչացնելուց»։

Ապա պատուիրակութիւնը հասնում է Երևան, ուր իրար հետ կուող հայերն ու Թուրքերը նոր էին հաշտուել, իբրև նախապայման ընդունելով հայ-մահմեդական խառն զօրագնդերի կազմութիւնը։ «Հայկական կազմակերպութեանց ներկայացուցիչները յայտնեցին, որ ամէն բան, որ կատարւում է այժմ Անդրկովկասում, յանգում է որոշ մտքի։ Նախ՝ բոլոր այն երկաթուղագծերի վրա, ուր ապրում են մահմեդականները, համարեա միաժամանակ տեսնում ենք որոշ բնոյթ կրող յուզումներ, որոնք վերջանում են երկաթուղային հաղորդակցութեան խանգարումով։ Մատնանշում են